Հայտարարություն

Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող և Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված մրցույթային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման բաց մրցույթ:

Լոտ - 1 Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0038-0100 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,48974 հա մակերեսով 3-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:
Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մեկնարկային տարեկան վարձավճարը՝ 35 834 ՀՀ դրամ: Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 1 791,7 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային տարեկան վարձավճարի 5%-ի չափով): Վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:
Լոտ - 2 Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0038-0098 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,40222 հա մակերեսով 3-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:
Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու մեկնարկային տարեկան վարձավճարը՝ 29 430 ՀՀ դրամ: Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 1 471,5 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային տարեկան վարձավճարի 5%-ի չափով): Վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:

Մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 206 սենյակ):

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:
Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2025թ. ապրիլի 8-ը:
Մրցույթը կայանալու է 2025թ. ապրիլի 11–ին ժամը 15.00-ին:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ